

ւայէ. և հոսանքը այնչափ բուռն է որ մեր գետային ուղեւորու-
թեան վրայ մտածել կուտայ ինձ :

Ճամբայ կ'ելլենք քառանիւ ընտիր կառքով մը, դրոշից քայլի ոճով
լծուած :

Դաշտորէք ծածկուած են իրենց գարնանի կանաչութեամբ,
օշինդրի և սամիթի բազմաթիւ տնկեր :

Ծովեզրն հասնելունս՝ ուրիշ ձկնորսարան մը կ'իջնենք, նազար-
բէկովի ընկերութեանը, որ ի նորաշէն տեսածնուս կարեւորու-
թիւնը չունի : Հոն ձուկն ու խաւիար՝ որչափ ձեռք իյնան, մէկէն
կը վաճառուին : Շահագործութեան տեղիք կազմուած են գետին
քով ցցերու վրայ շինուած տնակներով :

Գեղեցիկ է ծովուն տեսարանը . ուր որ նայիս՝ չորս կողմդ կը
տեսնես սպիտակափայլ առաքաստօք հողմուռոյց պղտի նաւակներ
ջուրը կտրելով : Ծովեզրեաց աւազին վրայ ժժմակներ ժողվելով,
կիզիչ արեւով կը գառնանք ի նորաշէն : Բազմութիւնք մթեխաց
հանգիստ չեն թողուր զմեզ, և որ կարապետք են ամառնային եղա-
նակի անհրաժեշտ և դժնդակ հիւրոց :

Շարունակելի

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Ի ԼԻՎՈՌՆՈՅ

ԼԵՊԱՌԱՆՈՅԻ ազգային էկեղեցւոյ նախկին Սաղմոսի, Գեր. Մեսրոպ
վարդապետի Սւղբորոտեան հետաքննական երկասիրութիւնն «Պատմութիւն զաղ-
թականութեան Հայոց ի Լիվոնոյ», քիչ օրէն կը հրատարակուի մեր տպագրա-
տունէն :

Իբրու ճաշակ մը՝ այդ գրքէն կը քաղենք նոյն քաղաքին մէջ երբեմն հաստա-
տուած հայկական տպարանին վրայ հետեւեալ տեղեկութիւնները, իբրու լրումն
մեր նախընթաց թերթերու մէջ դրուած Մարտէլլի հայ տպարանին շահագրգիռ
պատմութեան :

Լիվոնոյի տպագրութեանց առաջինն եղաւ 1642 ին փոքրա-
դիր Սաղմոսն Ջուղայեցի Յովհաննէս անուն վարդապետին ար-
գեամբ, որ էր միաբան Սմենափրկիչ վանաց, և հմտագոյն ի
տպագրական արուեստի : Երեւոյ Ջուղայեցի վարդապետն ի
Հոռովմ նորակազմ հայկական գրեր ձուլել տուաւ . և Դոսկանա-
յու վարչութեան թոյլտուութեամբն ի Լիվոնոյ տպարան մի

հաստատեց, կատարելով իւր փոքրագիր սաղմոսաց տպագրութիւնն ութսուն օրուան մէջ։ Փոքրագիր սաղմոսաց յիշատակարանին մէջ այս ամենայն նշանակեալ է հետեւեալ եղանակաւ . « Եիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս Ջուղայեցի, շնորհքն Աստուծոյ վարդապետ և սպասաւոր սուրբ Էլմիածնի, որ ի թուին ՌՁԸ » . և ի հանդիպոյ հետեւեալ ընծայագրութիւնն կամ ողջունադիր առ Խաչատուր վարդապետ Կեսարացի, առաջնորդ վանիցն Ջուղայոյ . — « Արդ ըստ հրամանի և ըստ կամաց սուրբ Հօրդ իմոյ . . . ի թիւս . ՌՁԸ բաժանեալ ի սուրբ ուխտէ գիմեցի յարեմուտս սակս լրութեան տպագրութեանս . և ի սպառուածս ամի միոյ՝ որ ընդ ծով և ընդ ցամաք՝ հասի յիտալիայ ի գեղազարդ քաղաքն ի վենետիկ . և վերահասու եղեալ գործառնութեանցն, ընթացայ ի Հռովմ . և անդ սկիզբն արարի նորագոյն գրոց և տպոց . և աւարտեալ մասն ինչ ի գործոցս՝ առի զարհեստաւորս և գիմեցի ի Լիվոռնոյ . անդ զտեղի կախալ մեծաջանիւ և բարի բարի գիտաւորութեամբ լրումն տուաք տպագրութեանս . յերկարելով յաշխատութիւնս բաց 'ի ճանապարհէն երեք ամ և վեց ամիս, անմխիթար յամենայն կողմանց :

« Եւ շնորհք Ամենագորն Աստուծոյ, և արթիւք Տեառնդ իմոյ աւարտեցաք զտպագրութիւնս անթերի և անպակաս կատարելութեամբ . որք են տիպք զանազանք՝ ըստ զանազան քանակութեան և որակութեան, մեծ և փոքր՝ ութիւք որոշեալք . ընդ որոց է և նիւթ երգոց և շարականաց, և այլ գործիք բազումք, զարդարիւք տպագրութեանս, որով ամենայն ինչ կարելի է տպել, յորոց իբր միջին կերպ է այս . . . իբրեւ զփորձ տպեցաք զսա յոյժ շտապմամբ, զի յաւուրս ութսուն աւարտեցաք զսա, հազար և յիսուն հատ թուով ի միասին . միայն և առանց ուրուք ձեռնատուի ի Լիվոռնոյ ի թիւ . ՌՂԳ . Մայիս Ժ » : ի ճակատ սաղմոսարանին գրեալ է . « Գիրք և Սաղմոսք Դաւթի, որ և սաղմոսարան կոչի . տպագրեալ եղև ի Հայրապետութեան Հայոց Տէր ֆիլիպպոս Սրբազան կաթողիկոսի, հրամանաւ և կամօք երջանիկ Խաչատուր վարդապետին Կեսարացոյ . ձեռամբ և հոգացողութեամբ նուաստ Յովհաննէս վարդապետի Ջուղացոյ յիւրում տպարանի զոր կայացոյց յիտալիա, ի վայելուչ քաղաքն և ի նաւահանգիստն Լիվոռնոյ ի թիւ . ՌՂԳ : Թոժարութեամբ վերակացուաց » :

Աւարտեալ ի Լիվոռնոյ տպագրական առջինեկ գործն, յիշեալ Ջուղայեցի Յովհաննէս վարդապետ ելաւ գնաց ի Լիվոռնոյէ, փոխադրելով իւր հայրենի քաղաքն տպարանն և վերաբերեալքն . ուր պարապեցաւ այլ և այլ կարևոր տպագրութիւններ ընելու :

Գուցէ ի Լիվոռնոյէ աճապարանօք երթն ի բաց եղած ըլլայ դադարեալսն մէջ յուսացած սատարութիւնն չգտնելուն համար, որպէս ինքնին կը ծանուցանէ զայն իւր հրատարակած սաղմոսաբանին յիշատակարանաւն ։

Յետ բարձման տալիւն տպարանին ի Լիվոռնոյէ, եկած է անդ հռչակաւորն և մեծն ի տպագրապետս Ռսկան վարդապետ Երեանցի և Արքեպիսկոպոս միաբան Ս. Էլմիածնի յայցելութիւն մերազնեայց, որպէս զի անոնց սատարութեամբն կարող ըլլայ Աստուածաշունչ Ս. Գրոց տպագրութիւնն ընել. և չյաջողելովն առաջին անգամն, քանիցս երթեկներ է ի Լիվոռնոյ, ուր այնչափ հակառակ մարդոց մէջ գտնուէ միայն երեք Զուգայեցի Պայազաճներն Ստեփանոս, Թէոդորոս և Պետրոս անուամբք ։ Որոնք ոչ միայն յօժարեր են, այլ և գաշնադրութեամբ ձեռնն տու եղեր են Ռսկանայ վարդապետին, որպէս նա ինքն Ռսկան վարդապետ դրով աւանդած է ըստ հետեւեալ եղանակին. « Գոհութիւն, պատիւ, և փառք Աստուծոյ զի ես զկարողութիւն անարժանութեան իմումս ձեռննտուութեամբ և օժանդակութեան ընկերակցութեան մարմնականօք գոյիւք Պայազատափառաց Ստեփաննոսի, Թէոդորոսի և Պետրոսի Զուգայեցւոց. քանզի աստուածասէրք կորովիքս այսօրիկ հայելով ի նուազութիւն աստուածայնոց կտակարանաց որ ի մէջ աղգիս Հայոց, մանաւանդ վարդապետաց և վանականաց և գրոց աշակերտաց, վասն որոյ ջերմեանդն սիրով յօժարեալք յորդարեցին զմիմեանս քաջաբերելով և զիմս նուաստութիւն, որ սակս գոյից վարանելի ձեռնն տուք եղեն ինձ գործառնութեանս այսմիկ, տալով առատապէս զծախս գրամոյն ըստ որում և յորժամ պիտոյանայր ։

« Քանզի ես իշխանութեամբ և հրամանաւ վեհափառի կաթողիկոսի Տեառն Յակոբու՝ ներթուոյ փրկչին հազարերորդի վեցհարիւրորդի վաթսմերորդի երկրորդի, իսկ ըստ Հայոց թուոյ հազարերորդի հարիւրորդի մետասաներորդի, Սեպտեմբերի ի Է. ելեալ յերկրէ և յազգէ իմմէ, դիմեցի ի կողմանս Եւրոպիոյ, յազազս տպման մատենիս այսօրիկ աստուածայնոյ, և բազմաւ վշտիւ և տառապակրութեամբ եկեալ հասի ի սահմանս Խտալիոյ յերկիրն Դոսկանու, ի քաղաքն Լիվոռնոյ. ներնախնումս նուագումս զոչ ոք գտի ինձ զօժանդակ. սակս որոյ թողեալ գնացի ի Հոմովմ, գտնեա անդ գտցի յաջողութիւն գործառնութեանս, և անդ ես ոչ եղև ինչ միտիւթարութիւն օգնականութեան գործոյս, վասն յոգունց պատճառաց ներհակականաց, թէ ի մերայնոց ազանց, և թէ ինքեանց կանոնաց և սահմանաց ։ Իսկ ի դառնալն իմումս անդրէն ի Լիվոռնոյ յետ

բազմաց հակառակութեանց սուտակասպասից արանց, և փաս-
քուսաց մերայնոց ազանց, որք ոչ զօգուտ ազգի և զՍրբոյ Ա-
թոռոյն, այլ զանձանց զցանկութիւն, և կամաց զհաճութիւն
կամէին ընդ, որոց ընդդիմակայեալ, զոչ ետու հաւանութեան
բանս. այլ ընդ երից հաւատարմագունից վերագրելոց և քրիս-
տոսասիրաց՝ յետ բազմաց քննութեանց և հարցփորձութեանց
միաբանեցայ սիրով, և դաշնագրականաւ գրով, զի սոքա երե-
քեանս ընդ իս հոգասցեն զամենայն զծախ վերագրեցելոյ մա-
տենին մինչև ցաւարտ, առ յօգուտ ազգիս և ի շահ Սրբոյ Ա-
թոռոյն:

« Բայց այսպիսի եղև պայմանն. քանզի ի թուին ՌՃԺԴ,
Փետրուարի ի. վերոգրեցեալ Պարոն Ստեփաննոսն և Պարոն
Պետրոսն խոստացան զաւելեալ շահն որ ի վաճառմանէ Աս-
տուածաշնչոյն լինիցի տալ Ս. Էջմիածնի. նոյնպէս և Պարոն
Թէոդորոսն զիւր բաժնի շահոյ զկէսն խոստացաւ Ս. Երուսա-
ղէմի, և զկէսն Յուշոյվանից Սրբոյն Սարգսի զօրավարի: Այ-
սու պայմանաւ ես ևս չու արարեալ հասի ի կողմանս հիւսի-
սայնոյ... ի քաղաքս յԱմսթսլետամի ի տպարան Սրբոյ Էջ-
միածնի և Սրբոյն Սարգսի զօրավարի, ուրանօր սկիզբն արարի
տպել գրովքն զորս Աւետիքն էր արարեալ » և այլն:

Ոսկան վարդապետ կ'աւանդէ այլուր որ իւր Աստուածաշունչ
Ս. Գրոց համար գրեք ձուլել տուեր է ի Լիվոռնոյ, ըսելովն -
« Իսկ ի հասանելն իմ աստ (ի Լիվոռնոյ) ձեռնարկեալ ետու
քանդակել զնօսք գիրսդ սակս խորագրութեան Աստուածաշնչ-
ին, որ մեծաւ ջանիւ հազիւ մինչև ի չորս ամիսն աւարտեցաւ »:
Յիշեալ Ոսկան վարդապետ շրջելով երթեկեկած է այս երեք
քաղաքներն Լիվոռնոյ, Ամսթերտամ, և Մարսիլիա. և մերթ
աստ և մերթ անդ բազմաթիւ տպագրութիւններ ըրեր է, ունելով
իւր օգնական Աւետիս եղբայրն և քանի մի վարդապետներ, և
այլն: Ամսթերտամի մէջ տպեալ շարականոցաց մէջ ստէպ Լիվոռնոյի
յիշատակութիւնքն եղած են: Մերս Ոսկանայ վարդապետի ի
Լիվոռնոյ հաստատեալ տպարանն յանուն Սրբոյն Սարգսի զօրա-
վարի 1669 ին հրատարակեր է Բեյլարմինտի Քրիստոնէականին
հայկական թարգմանութիւնն, որպէս նաև յաջորդ տարին Պար-
տէզ հոգեւոր կոչեցեալ գրոց տպագրութիւնն: Որոց յիշատակա-
րանքն են ըստ այսմ. « Տպագրեցաւ տառս աստուածային յամին
որ ի ծննդենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հազար և վեց
հարիւր և եօթանասուն, ի թուականութեանս Հայոց հազար հա-
րիւրի և տասնըննի յԱլիկուռնայ. ի փառս մեծագոյնս Աստուծոյ.
ներտպարանում Սրբոյ Էջմիածնի, հաճութեամբ Տեառն Ոսկա-

նի Արքեպիսկոպոսի Հայոց, Սրբազրութեամբ Կարապետի վարդապետի Աղբիւնացւոյ » :

Իսկ Պարտէզ հոգևորին է. « Աւարտեցաւ գրողիս որ կոչի Պարտէզ հոգևոր ի թուին Հայոց Ռէժի. հաւանութեամբ Տեառն Ոսկանի Երեանցւոյ, և սրբազրութեամբ Կարապետ վարդապետի Աղբիւնացւոյ, Լիպունի որ է Լիվոնոյ » :

Վերագոյն յիշատակեալ Պայագաղոն Ստեփանոս, Թէոդորոս և Պետրոս երեքն ևս Լիվոնոյի գաղթական վաճառականաց և առաջաւորաց գասէն, որոնք ըստ վկայութեան Ոսկանայ վարդապետի այնքան ազգասիրութեամբ և բարեպաշտութեամբ ձեռննու եղած էին իրենց գրամական օգնութեամբն Աստուածաշունչ Ս. Գրոց տպագրութեան, մի և նոյն ժամանակէն մնացեալ այլ գրութեամբ չարաչար և անխնայ եղանակաւ պարսաւուած են Գրութեան էութեանը առդերէ բաղկացեալ և չափեալ ռոտանաւոր վիպասանութիւն մի, որ տպագրեալ է ի վիէննա ի վանս Մխիթարեանց յամին 1887, « Հանդէս Ամսօրեայ » կոչուած ամսաթիւր մէջ, յէջ 170 : Գրիչ վիպասանութեանն է Երեանցի Թադէոս Երէց Համադասպեան, որ մեծահատոր Ճաշոցաց տպագրութեամբն ի վենետիկ նշանաւոր և անուանի եղած է :

Այսպիսի Պարսաւագրին կամ վիպասանութեան մէջ Համադասպեանն լիովին կենսագրութիւն և ազգաբանութիւն ըրած է վերագոյն յիշատակեալ Լիվոնոյի երեք վաճառականացն, տալով իւր գրութեանն անուն ըստ այսմ. « Պատմութիւն Պետրոսի Աւագ Գոնսուլին Հայոց, և երկու ընկերացն Քիթոնէնց Դեղորոսին (Թէոդորոսին) և Խաննց Ստեփանին » : Որով Թադէոս Երէց կ'աւանդէ Ոսկան վարդապետին ի Լիվոնոյ յիշեալ երեք Ջուղայեցւոց հետ ըրած դաշնագրութիւնն Աստուածաշունչ Ս. Գրոց տպագրութեան համար, յետոյ անոնց դաշնագրումն ըստ ամենայնի հարկաւոր ծախքն մատակարարելու, որով Ոսկան վարդապետ ստիպեալ ըրած է այլուստ փոխառութիւն տպագրութեան գործն աւարտելու : Աստուածաշունչ գրեանքն յանձնեւ է Թադէոս Երէց Համադասպեանի, որ տանի վաճառէ այլուր. Համադասպեան ինքն ի Լիվոնոյ ուղևորեալ հիւրընկալուեր է մեր երեք Ջուղայեցի վաճառականներէն, պայմանագրութեամբ և համողմամբ ստորագրեր է փոխանակագիր մի և սուեր է անոնց ձեռք. Համադասպեանն կը խոստովանի որ միամտութեամբն խաբուեր է անոնց նենգութենէն, վասն զի գաղտագողի գրեանքն Կ. Պոլիս առարեր են վաճառման համար, ուստի բողբ բառնալով դատաստանի գիմեր է և վկայիւք հաստատեր է իւր իրաւունք և երեք Ջուղայեցւոց անիրաւութիւնն. այլ փոխանակ արդարութիւն

գտնելու, ի բանտ մատնուեր է, ուր վշտալից մնացեր է երկայն ամիսներ, ապա միջնորդութեամբ Առաքելական Նուիրակին ի փլորենտիա, դատաստանն վերստին տեսնելով և վճռով արդարութեան արձակուեր է վերջապէս: Վիպտստին ամբաստանութիւնն խիստ կը թուին մեղ, որպէս անոր պարտաւքն չափազանցք, կը թողումք որ բանասէրք դատեն զայնս: Այլ եթէ ունկնդրութիւն ընենք Ոսկանայ կոչեցեալ կտակագրոյն, որչափ ծանր գանգատներ նշանակուած են Համազասպեանին դէմ: Մենք զանց կ'ընենք զանոնք յառաջ բերելէն: Նշանաւոր է Համազասպեանի ոտանաւոր վիպասանութեան վերջաբանութեան այս մասն.

- « Տրտղ բարեաց ամենայի
- « Խնամեա ազգիս տառապելի
- « Ողորմելի հայկեան սեռի »
- « Պահեա անփորձ քոյդ հանելի »
- « Վէմն հաւատոյ անշարժելի
- « Աթոռն ի Հռովմ տուրք Պետրոսի
- « Յաջորդ տասներորդ Տէր էլեմէնթի
- « Գոչ սրբազան Տեառն Պապի »
- « Եւ ընդ սրբոյ Հայրապետի
- « Հայոց Տեառն Տէր Յակոբի »
- « Յաջորդ սրբոյն Լուսաւորի
- « Ամբոս սրբոյ Էջմիածնի »
- « Աղօթիւք տղին է հայցելի »
- « Բառնալ զշար հանուրց սեռի
- « Հեղուլ հոգւոյ իմանալի
- « Քրիստոնէից միանալի » և այլն:

Ոտանաւոր վիպասանութեանս յիշատակարանն է, « Շնորհօք Ամենաղօրին Աստուծոյ աւարտեցաւ բանս շարադրանաց յաւմեմնէ Թադէոսէ երկցուէ Համազասպեան երևանցւոյ ի թրւոյ փրկին 1671. Ֆիօրենցա քաղաքի, իսկ ի թուոյ Հայոց ՌՃԻ. Մարտի ամսոյն 1. և զիս զմեղաւորս յիշեցէք, հայցելով ազատութիւն ի Տեառնէ. քանզի գրեցի ի բանտի, և գուք յիշեալ լիջիք ի Յիսուսէ Նազովրեցւոյ »: Յիշատակարանին կից կայ օրինակողին* յաւելուածն այսպէս. « Պատմութիւնս այս չափաբանեալ ի Համազասպեան երկցուէ Թադէոսէ, զմանց մերազնեայց նազելեաց

* Օրինակին Պ. Վ. Մ. է Կ. Պօլսեցի Պետրոս Վարդապետ Մուրատեան, որ Լիվոռնոյի Եկեղեցւոյն տաշնորդաց շարին մէջ երրորդն է, որոյ հրատարակ ի պաշտօնէ, յԱրքեան փոխադրեալ անդ վախճանած է յամիս 1775:

և զ'ի յընդհանուր ոլորտս աշխարհի և զ'ի ծագաց ի ծագս տիեզե-
րաց բազմազան գովասանաց արժանեաց՝ ի նախատիպ պատ-
ճենէ որքան անկն էր իսկութեամբ օրինակեցաւ ի տրուպ բանա-
սիրէ ումեմնէ, որ և կոչի Պ. Վ. Մ. զնախկինն ընթերց որպէս
վէմ, զմիւս իմա զերթ րաբուն, իսկ զերրորդն ծանի'ր որպէս
իսկ է իւր մականուն, զոր բարբառ Հագարաց արտասանէ ըզձա-
կան, կամ՝ որ ըստ ըզձի, և դուք օրհնեալք եղիջիք՝ յորմէ լնու զեր-
կինս և զերկիր : Ի թուոյ փրկչին 1774 փետրուար ամսոյն ութն » :

Լիվոնոյի յանուն Սրբոյն Սարգսի զօրավարի նուիրեալ տալա-
րանն 1691 ին տպագրեց Առաքելեան խաչատուր Վարդապետի
կարնեցւոյ Քերականութիւնն, որոյ խորագիրն . « Յօրինեալ ի
ներտպարանում Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի զօրավարի յԱլի-
կուռնա քաղաքի, ներթուում փրկչին 1694 . իսկ Հայոց ՌՃԽԷ .
Մարտի Դ . — Հետեի առաջին և նուաստագոյն մասն որ յինքեան
ներփակէ զամենայն ազատական արհեստս, այսինքն զքերականու-
թիւն, զհռետորութիւն, և զբանաստեղծութիւն : Ուստի անյատի
մասս այս յերիս հատորս . յառաջնումն ընծեռեցի զքերականու-
թենէ, և յերկրորդում՝ զհռետորութենէ և յերրորդում՝ զբա-
նաստեղծութենէ. Հատոր Ա. Յագագս քերականութեան » :

Թամին 1695 հրատարակած է փոնցիանոս նյայսեր պատմու-
թեան գիրքն, որ ունի խորագիր այսպէս . « Գիրք նյայսերն
փոնցիանոսի և կնոջն և որդւոյն Դիոկղեսիանոսի, և յեօթանց
իմաստասիրաց . տպագրեալ ի ներտպարանում Սրբոյն Էջ-
միածնի և Սրբոյն Սարգսի զօրավարի, յԱլիկուռնա քաղաքի
թվոյ փրկչին 1696 . և Հայոց ՌՃԽԷ . Մայիս ին » . իսկ
յիշատակարանն . « Հաճութեամբ Տեառն Եփրեմի Արհեպիսկո-
պոսի և Պատրիարքի կ. Պօլսոյ, հոգաբարձութեամբ, ծախիւք և
սրբագրութեամբ նուաստի ումեմն Մ. Ս. Դ . » . որ թուի Մահ-
տեսի Ստեփան թասապեան, Թաջորդ տարին հրատարակուեցաւ
Պատմութիւնն դարձի և մկրտութեան Յովսեփայ Քախիլքեան
հրէի որ հինգ ընտանեօք ի միասին դաւանեցաւ ուղղափառ հա-
ւատքն . իսկ խորագիրն է ըստ այսմ . « Պատմութիւն դարձի և
մկրտութեան Յովսեփայ Քախիլքեան մեծանուն հրէի
րաբունոյ Երբայեցւոյ ի գաւառէն Ալամանաց, արարեալ ի նմանէ
ի լեզու գերմանացւոյ, թարգմանեալ ի հայ յիտալական թարգ-
մանութենէն Տէր Թակոբ Վարդապետի Զրպետեան Նդեսացւոյ ի
Լիվոնոյ 1697 » :

Թամին 1698 տպագրուեցաւ Քառգիրքն Հայոց յօրինեալ Երե-
միա Վարդապետէն, որուն խորագիրն է այսպէս . « Քառգիրք
Հայոց արարեալ ի Սուրբ Էջմիածին յԵրեմիայ Վարդապետէ, և

ես Սարգիս Եպիսկոպոս աշխատասիրեալ և զբառս Սատուածաշունչ Ս. Գրոցն ընդ սմա միաւորեալ, որ և ընթերցողացն Սատուածաշունչ գրոց բաւական է լիով: Տպագրեցաւ յԱլիկուռնայ քաղաքի, և թուականութեանս Հայոց ՌՃԽԷ. և ի թուին փրկին 1698. Յունիս » եղած է ի Լիվոռնոյ այլ ևս տպագրութիւն Բառգրոց Հայոց ի թուականութեան փրկին 1727 և Հայոցն ՌՃՀԷ. որուն յարակից է վարդանայ վարդապետի աշխարհագրութիւնն, այլ մեզ հաւանական չի թուիր տպագրութեանն ստուգիւ Լիվոռնոյ եղած ըլլալն վասն ինչ ինչ պատճառաց: Որոյ խորագիր է. « Արտ. բեալ է աշխարհացոյց նորոգ թարգմանչին, և երկրորդ Լուսաւորչին վարդանայ վարդապետի պարզ և համառօտ տեսութեամբ »:

Վերջապէս յամին 1701 տպագրեալ հրատարակեցաւ Թէոփիլոս իմաստասիրին խօսակցութեան գիրքն, որոյ յառաջաբանին մէջ է հետեւեալն. « Որովհետեւ չըմբցայ ի մէջ Հայոց, իմացեալ ճանաչեցի զնոսա ունողս զկատարեալ փափաք առ ի յիմանալ զճըմարտութիւնն հաւատոյ, և ծառայել Սատուոյ ջերմեանդապէս, ուստի յայտ է զի են որդիք Բարձրելոյն ըստ տէրունական բանին. վասն որոյ յոյժ տրտմեցայ, զի թէպէտ խնդրէին զհացն կենաց, բայց ոչ զք գոյր զի բեկանիցեր նոցա պարզապէս մեկնութեամբ: Որոյ աղադաւ յօժարեցայ և ես կարկառել զբանս ինչ խրատու պարզ և յստակ բառիւ »:

Իսկ խորագիրն է ըստ այսմ. « Թէոփիլոս, այսինքն խօսակցութիւն Թէոփիլոսի ընդ վարդապետին յազագո ճմարտութեան և ջերմեանդութեան: Ի Հայրապետութեան Տեառն Նահապետի Կաթողիկոսի ամենից Հայոց ի յԱլիկուռնայ քաղաքի, յամի Տեառն 1701. Յունուարի »:

Ի Լիվոռնոյ տեսած եմք երբեմն Ա. Ետարան մի հնագոյն տպով անթուական և առանց յիշատակարանի. գրոց ձևէն մակարեւրած եմք որ թերեւ և այն տպագրուած ըլլայ ի Լիվոռնոյ: Կարծիք են ոմանց որ նաեւ Շարա կնոց մի, Աղուեսագիրքն, Խորենացոյ աշխարհագրութիւնն, վարդանայ Առաւքն, Հոռովական Օրացոյց և Մ'րդանոց հոգեոր կոչուած գրեանք տպագրուած ըլլան ի Լիվոռնոյ *:

* Մենք ոչ սակաւ հետազոտութիւն քրտն ենք ի Լիվոռնոյ, որպէս նաև Էմիլ Դեղա անուն հայագէտ Իտալացին, Հայկական տպարանին հետքն և անոր վերաբերեալ յիշատակութիւնքն գտնել, ձեռնտու ունելով մեզ Լապրօնեան գրատան վերակացուն, այլ զուր եղաւ մեր աշխատութիւնն, զի չգտաւ ինչ ժամանակին հեռաւորութեան համար: